«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2024-2025
Պատմություն (7-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

1. **Մեծ Հայքի քարտեզի վրա ճշգրիտ տեղադրեք Այրարատ և Աղձնիք նահանգները և բացատրեք, թե ինչո՞վ են այս նահանգները կարևոր /1 մ./:**

_____

_____

_____

2. **Վանի թագավորության ո՞ր արքան է իր թողած ասուրերեն արձանագրության մեջ իրեն անվանում՝ «մեծ արքա, հզոր արքա, տիեզերքի արքա, Նաիրիի արքա…» /0,5 մ./:**

_____

3. **Ո՞ր գետում է մկրտվել Տրդատ III արքան և ու՞մ կողմից /0,5 մ./:**

_____

4. **Ի՞նչ տիտղոս էին կրում Բագրատունի արքաներ Աշոտ II-ը և Գագիկ I-ը /0,5 մ./:**

_____

5. **Ո՞ր դարն են անվանում «հայ մշակույթի ոսկեդար» և ինչու՞ /0,5 մ./:**

_____

_____

6. **Հայերի մղած նշանավոր ճակատամարտերն ու դրանց թվականները լրացրեք աղյուսակում /3 մ./:**

Տիգրանակերտի, Ներսեհապատի, Ավարայրի, Արածանիի, Ձիրավի, Սևանի, Հռանդեայի, Ճարմանայի:

	Ճակատամարտի անվանումը	Տարեթիվը
Հայ-հռոմեական		
Հայ-պարսկական		
Հայ-արաբական		

7. **Այս արքաները ստացել են մականուններ կամ տիտղոսներ: Լրացրե՛ք դրանք նրանց անվան կողքին՝ նշելով նաև կառավարման տարիները /3 մ./:**

Աշոտ Երկրորդ _____

Խոսրով Երրոդ _____

Տիգրան Երկրորդ _____

Աշոտ Երրորդ _____

Տրդատ Երրորդ _____

Արտաշես Առաջին _____

8. Համապատասխանեցնե՛լ /1 մ./:

1) Եղիշե	ա) «Անաբասիս»
2) Մովսես Խորենացի	բ) «Մատյան ողբերգության»
3) Կորյուն	գ) «Վարդանի և հայոց պատերազմի մասին»
4) Քսենոփոն	դ) «Հայոց պատմություն»
5) Գրիգոր Նարեկացի	ե) «Վարք Մաշտոցի»
	զ) «Տիեզերական պատմություն»

1	2	3	4	5

9. Ե՞րբ և ու՞մ միջև է կնքվել Արտաշատի պայմանագիրը: Ինչու՞ այդ պայմանագրով հայոց արքան զիջեց իր գրաված բոլոր տարածքները՝ բացի Մեծ Հայքի տարածքից /2,5 մ./:

10. Ի՞նչ աշխարհիկ և հոգևոր բարեփոխումներ է կատարել Պապ թագավորը (ներկայացնել նվազագույնը 4-ը): Ի՞նչն էր նրա սպանվելու պատճառը /2,5 մ./:

11. Ի՞նչ դասերից էր բաղկացած Սպարտայի հասարակությունը: Ի՞նչ իրավունքներ ունեին նրանցից յուրաքանչյուրը /1 մ./:

12. Ներկայացնել (կարող եք նաև գծագրի տեսքով) հռոմեական հանրապետության պետական կառուցվածքը /1 մ./:

13. Ներկայացնել «օստրակիզմի դատարան» հասկացությունը: Ու՞մ կողմից է այն ընդունվել: Ո՞րն էր դրա իմաստը /1 մ./:

14. Ե՞րբ է Հռոմում ձևավորվել առաջին եռապետությունը: Ովքե՞ր էին նրա անդամները: Ի՞նչ կապ ունեին նրանք Մեծ Հայքի և հայոց արքա Արտավազդ Բ-ի հետ /2 մ./: